ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆ ԱՂԹԱՄԱՐՈՒՄ (X ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ)

Վարդան Ալեքսանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն
ՀՀ, Տավուշի մարզ, Իջևան, Ուսանողական 3
Էլ. հասցե՝ vardanalexanyan406@gmail.com
ORCID: 0009-0005-3615-4778
Հոդվածը ներկայացվել է 21.04.2023, գրախոսվել է 26.06.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-42

Ամփոփում

Արաբների կողմից Դվինի կաթողիկոսարանի հիմնահատակ ավերումից և հայրապետական տիրույթների բռնազավթումից հետո Հովհաննես Դրասխանակերտցին կյանքի վերջին շրջանն անցկացնում է Վասպուրականում՝ փաստացի ձևակերպելով Հայոց նվիրապետական կենտրոնի տեղափոխությունը Դվինից Աղթամար: Այդ հարցում մեծ դեր է ունեցել Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին, որի դիրքը Հայաստանի իշխանական աստիճանակարգության մեջ բնութագրվում է որպես Primus inter pares: Հայոց նվիրապետության կենտրոնը տեղափոխելով Աղթամար և մոտ երկու տասնամյակ (925-943) տնօրինելով նրա առաջնորդների ընտրությունը՝ Գ. Արծրունին շարունակաբար մեծացնում էր իր իշխանությունը համազգային հոգևոր կառույցի վրա: Այդ ընթացքում Աղթամարում հաջորդաբար պաշտոնավարել են Ստեփանոս Բ, Թեոդորոս Ա և Եղիշե Ա Ռշտունի կաթողիկոսները, որոնք տեղի հոգևորականության ներկայացուցիչներ էին: Վերջիններս Հայոց կաթողիկոս էին դարձել Արծրունի արքայի կամքով ու ցանկությամբ, ուստի և նրա «բարձր հովանու» ներքո էին: Փաստացի ունենալով գերակա դիրք և բարձր տիտղոսային իշխանություն՝ Գ. Արծրունին պարտավորված է զգում ձեռնարկել երկրի և ժողովրդի անվտանգության գերխնդրից բխող գործնական քայլեր, չեզոքացնել արտաքին սպառնալիքները: Այդ նպատակով նա հայերի անունից նամակ է հղում Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Լեկապենոսին ու առաջարկում, Հայ և Հույն եկեղեցիների դավանաբանական տարաձայնությունները վերացնելով, վերականգնել առաջին երեք տիեզերական ժողովների ժամանակաշրջանի եկեղեցաքաղաքական բնականոն հարաբերությունները: Գագիկը պատրաստակամություն է հայտնում հաստատել քաղաքական դաշնակցություն և ընդունել կայսրության հովանավորությունը, որը կապահովագրեր հայերին արտաքին սպառնալիքներից: Բյուզանդական արքունիքը նամակը թողնում է անպատասխան՝ անուղղակիորեն արտահայտելով իր թերահավատությունը Գագիկ Արծրունու առաջարկների վերաբերյալ:

Բանալի բառեր՝ Գագիկ Արծրունի, Աղթամար, կաթողիկոսանիստ, Դվին, նամակ, Բյուզանդիա, Վասպուրական:

Ներածություն

Աշոտ Երկաթի (914-929) մահից հետո Հայաստանի և քրիստոնյա Այսրկովկասի քաղաքական թատերաբեմում մեծապես աճում է Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու (908-943) դերը: Թե՛ Բյուզանդիան, թե՛ խալիֆայությունը դե յուրե (de jure) ճանաչում են նրա գերակայությունը տարածաշրջանի իշխանների նկատմամբ[1]: Գագիկ Արծրունու ծրագրերում կարևոր տեղ էր զբաղեցնում Վասպուրականը հայոց նվիրապետության կենտրոն դարձնելու խնդիրը: Դեռևս իր գահակալության սկզբից Արծրունի իշխանը կարևորել է երկրամասի հոգևոր աթոռի դերը, աջակցել նրա գերագահության հաստատմանը: Ղ. Ալիշանը հայտնում է, որ, ըստ Աղթամարի հին մատյանների տվյալների, տակավին մինչև կաթողիկոսական աթոռի տեղափոխությունն այստեղ X դ. սկզբներից արդեն Աղթամարն ունեցել է առանձնաշնորհյալ կարգավիճակ. Գագիկ Արծրունին «ուզեց որ ինչպես ինքնագլուխ քաղաքական տէր, այնպէս ալ եկեղեցական գլուխ մ'ունենայ իր երկիրն»: Թագավորի հավանությամբ 921 թ. Հայոց կաթողիկոսը Գագիկ Արծրունու եղբորորդի Եղիսեին ձեռնադրում է Վասպուրականի թագավորության եպիսկոպոսապետ, որը Հայոց կաթողիկոսի նվիրապետական ենթակայության ներքո էր[2]: X առաջին քառորդի վերջին, օգտվելով Բագրատունյաց Հայաստանի քաղաքական պառակտվածությունից և Դվինի կաթողիկոսարանի փաստացի լուծարումից, Գ. Արծրունին Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն հրավիրում է Վասպուրական և Աղթամարը դարձնում հայոց կաթողիկոսանիստ: Հայոց կաթողիկոսական կենտրոնի տեղափոխությունն Աղթամար պետք է խորհրդանշեր Վասպուրականի՝ Հայաստանի գլխավոր թագավորություն լինելը և ընդգծեր նրա տիրակալի ազդեցությունը համահայկական հոգևոր կառույցի վրա: X դ. 2-րդ քառորդին Արծրունի թագավորի տնօրինությանն է անցնում հայոց կաթողիկոսության գահակալ հաստատելու իրավունքը, որը մինչ այդ Բագրատունիների մենաշնորհն էր: Շուրջ երկու տասնամյակ Աղթամարում, երբ այն հայոց կաթողիկոսների նստավայրն էր, աթոռակալել է երեք Հայոց կաթողիկոս, որոնք տեղի հոգևորականության ներկայացուցիչներ էին և Արծրունու հովանավորության ներքո էին:

Հայոց կաթողիկոսական կենտրոնի տեղափոխությունը Դվինից Վասպուրական և X դ. 2-րդ քառորդին նրա աթոռակալների գործունեության հիմնահարցերը պատմագիտության մեջ ունեցել են ոչ միանշանակ գնահատական: Մատենագրական վկայություններով փաստարկված ու հիմնավորված սույն քննությունը նպատակ ունի նոր լույս սփռելու Հայ եկեղեցու պատմու-

[1] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1970, 151:

[2] Ալիշան 1873, 54-55, հմմտ. Ակինյան 1920, 8: Այս տեղեկության հավաստիությունը կասկածահարույց է, քանի որ այդ մասին վկայություն չունի Արծրունյաց տոհմական պատմիչը:

թյան այս կարճատև, բայց ուշագրավ շրջափուլի վրա, պարզաբանելու եկեղեցաքաղաքական իրողությունների պատճառներն ու հետևանքները:

Դվինի կաթողիկոսարանի վերացման պատճառները

Դվինը, որպես կաթողիկոսական կենտրոն, V դ. վերջերից սկսած (483-925), նշանակալի դեր է ունեցել հայոց պետականության վերահաստատման, հոգևոր և քաղաքական ուժերի համախմբման գործում: VIII-IX դդ. արաբական տիրապետության շրջանում ընթացող ակտիվ միգրացիոն գործընթացների հետևանքով լրջորեն փոխվում է Դվինի ժողովրդագրական պատկերը՝ վերածվելով հոծ իսլամադավան բնակչություն ունեցող արաբական վարչական ու ռազմական կենտրոնի[3]: Վերաբնակիչներից ձևավորված քաղաքային վարչակազմը խրախուսում և նպաստավոր պայմաններ էր ստեղծում Դվինում իսլամ հոգևորականների քանակի աճի համար, որը, բնականաբար, բացասաբար էր ազդում հայ հոգևորականության գործունեության վրա: Դեռևս IX դ. կեսերին՝ Հայոց կաթողիկոս Հովհաննես Ովայեցու (833-855) պաշտոնավարման շրջանում, հայոց հոգևոր առաջնորդի համար Դվինում այնպիսի անտանելի պայմաններ էին ստեղծվել, որ նա, տեղից տեղ շրջելով, մահկանացուն կնքում է Գեղարքունիքում[4]: Զաքարիա Ձագեցի կաթողիկոսի (856-877) փաստացի նստավայրը Դվինի փոխարեն Շիրակ գավառի Երազգավորս գյուղաքաղաքն էր, որը Հայաստանի ամենաապահով վայրն էր[5]:

Դվինի ճակատագրի վրա մեծ ազդեցություն է ունենում 893 թ. տարերային աղետը՝ երկրաշարժը: Այն անդառնալի մարդկային և ֆիզիկական վնասներ է պատճառում քաղաքի բնակչությանը՝ ավերելով բոլոր եկեղեցական կառույցները: Փլուզվում են նաև կաթողիկոսարանը և Ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցին, որոնցից առաջինն ամենայն հավանականությամբ հետագայում վերածվում է մզկիթի[6]: Կաթողիկոսանիստը ժամանակավորապես տեղափոխվում է Զվարթնոց: Հայոց կաթողիկոսական կենտրոնին մեծ հարված է հասցնում Բագրատունիների և Ատրպատականի ամիրաների պայքարը Դվինի համար: Իր աթոռակալության շրջանում Հովհաննես Դրասխանակերտցին (898-925) բազմիցս փորձում է վերականգնել Դվինի կաթողիկոսարանը, սակայն այդ ուղղությամբ նրա ջանքերը հաջողություն չեն ունենում: Հակաթոռ թագավորների՝ Աշոտ Երկաթի և Աշոտ Շապուհյանի երկարատև բախումներից հետո 920 թ. Դրասխանակերտցու միջնորդությամբ հաջողվում է «ի մէջ նոցա զքաջավայելուչ խաղաղութեանն պայման» հաստատել, որի առթիվ Դվինում կազմակերպվում է «խնճոյս ցնծութեան»: Դվինը վերստին դառնում է հայոց թագավորությանը ենթակա, սակայն իսլամ հոգևորական-

[3] Ադոնց 2006, 442-443:
[4] Դրասխանակերտցի 2010, 436:
[5] Անանեան 1989, 41, հմմտ. Չամչյան 1984, 450:
[6] Ղաֆադարյան 1952, 120-122, հմմտ. Տեր-Ղևոնդյան 1965, 115:

ներն այնտեղ պահպանում էին տիրապետող դիրքն ու ազդեցությունը: Աշոտ Բ-ին հաջողվում է հնազանդեցնել «պաշտաունէիցն հեթանոսաց (իսլամ հոգևորականներին - Վ.Ա.)», որոնք բռնագրավել էին հայրապետանոցի ինչքն ու կալվածները, և որոնց համար պայքարում էր Հայոց կաթողիկոսը[7]: Բագրատունիների կողմից Դվինի մի քանի տարով նվաճումը ժամանակավոր բնույթ ուներ, թեև միայն Դվինի գրավումն էր, որ Աշոտ Բ-ին հնարավորություն կտար իր գերիշխանությունը հաստատելու Մեծ Հայքում[8]:

Աշոտ Երկաթից հետո Աբասը նույնիսկ փորձ չի անում Սաջյանների հափշտակած Դվինը վերանվաճել: Մոտ 12 տարի (929-941) Դվինը ենթակա էր Ատրպատականի արաբ տարատեսակ կառավարիչների իշխանությանը:

Հայոց կաթողիկոսի նստավայրի տեղափոխությունը Դվինից Աղթամար

Բյուրականի մարտերից հետո (923) Ատրպատականի Սաջյան Յուսուֆ ոստիկանին փոխարինած Նասրը «գիւղաւք եւ գերդաստանաւք» բռնազավթում է Դվինի կաթողիկոսարանի ունեցվածքը: Առանց կաթողիկոսական աթոռի մնացած հայ տարրը Դվինում էապես թուլանում է[9]: Հովհաննես կաթողիկոսը, որևէ տեղից օգնության հույս չունենալով, շուրջ մեկ տարի՝ 923 թ. մինչև 924 թ., «ամառնայինն յաշունն յեղանակեալ յեղափոխէր», մնում է Բագարանում, իսկ 924 թ. աշնանը «առ ի նմանէն (Աշոտ Երկաթից - Վ.Ա.) յուղարկեալ» կաթողիկոսը գնում է Վասպուրական՝ «առ թագաւորն Հայոց Գագիկ»: Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին կաթողիկոսին ընդունում է «հոգեւոր սիրոյ հարազատութեամբ եւ հաստատուն հաւատով եւ աներկբայ յուսով» ու իր եղբայր Գուրգենի հետ նրան առնում վստահելի հովանու տակ: Արծրունի թագակիրը հուսադրում է վտարանդի հոգևոր առաջնորդին, խոստանում ազատագրել Դվինի կաթողիկոսարանը՝ հավաստիացնելով, որ «ոգւով չափ ջան ի մտի եդեալ հոգասցի վասն դարձի մերոյ ի բնակութիւնս մեր»[10]:

Հավանական է, որ ծերունազարդ կաթողիկոսի Վասպուրական մեկնելու վճիռը հետևանք էր այն հանգամանքի, որ 923 թ. նրա անհաշտ թշնամին՝ Յուսուֆը, ազատվել էր բանտից և վերստին նշանակվել Ատրպատականի ամիրա[11]: Վասպուրականն այդ ժամանակ Հայաստանի ամենաապահով վայրերից մեկն էր[12], իսկ նրա թագավոր Գագիկ Արծրունին իր կարողություններով ոչ միայն չէր զիջում Բագրատունի գահակալին, այլև ինչ-որ տեղ ավելի

---

[7] Դրասխանակերտցի 2010, 554, հմմտ. Տեր-Ղևոնդյան 1965, 135, հմմտ. Հայ ժողովրդի պատմություն 1976, 62:

[8] Տեր-Ղևոնդյան 1965, 135:

[9] Տեր-Ղևոնդյան 1965, 138:

[10] Դրասխանակերտցի 2010, 579:

[11] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1981, 174, հմմտ. Վարդանյան Վ. 1988, 122:

[12] Տեր-Ղևոնդյան 1965, 140:

ազդեցիկ էր: Արծրունիները վաղուց ունեցել են երկրի հոգևոր կենտրոնը իրենց տիրույթներ տեղափոխելու հավակնություններ, և պատահական չէ, որ կաթողիկոսին Վասպուրական տեղափոխվելու շարժառիթներից մեկն էլ հենց դա է նշում. «ըստ միշտն հրաւիրանի կոչման նորա (Գագիկ Արծրունու - Վ.Ա.)»: Այս գործընթացի մեջ կա ուշագրավ մի վկայություն, որը մատենագիր կաթողիկոսը հատուկ արձանագրում է՝ հայոց հոգևոր աթոռի երկփեղկման առթիվ սերունդների հնարավոր մեղադրանքից ազատվելու համար: Կաթողիկոսը շեշտում է, որ ինքը Գագիկ Արծրունու մոտ «յուղարկեալ» էր անձամբ Աշոտ թագավորի կողմից: Երկարատև թափառումներից հետո հայոց հոգևոր կենտրոն Դվինի թալանվածության և անապահովության պայմաններում կաթողիկոսի տեղափոխությունը հայոց հոգևոր իշխանության ընտրությունն էր հօգուտ Վասպուրականի թագավորության, ուստի հեռատես հոգևոր առաջնորդը իրեն ապահովագրում է Աշոտ Երկաթի հորդորին անսալու փաստով[13]: Հայ մատենագիրները մեղադրական շեշտադրմամբ են հիշատակում Գագիկ Արծրունու թագավոր դառնալը՝ համարելով այդ փաստը հայոց միասնական թագավորության մասնատման պատճառ: Ուստի Բագրատունյաց տիրույթներից անցնելով Վասպուրական՝ կաթողիկոսն անցնում է Բագրատունի գահակալի հակառակորդի կողմը: Եվ որպեսզի տարիներ հետո ընթերցողն իրեն չմեղադրի այդ քայլի համար, կաթողիկոսը գրում է, թե Աշոտ Երկաթն է իրեն ուղարկել Գագիկ Արծրունու մոտ:

Գագիկ Արծրունին խոստանում է կաթողիկոսին վերադարձնել արաբների բռնազավթած հայրապետական տիրույթներն ու ունեցվածքը: Հավանաբար այդ պատճառով դրական փոփոխություն է նկատվում Գագիկ Արծրունու նկատմամբ կաթողիկոսի վերաբերմունքում, որն արտահայտվում է նրան «…թագաւորն հայոց Գագիկ» հորջորջելով, որը մինչ այդ չէր արել: Հայոց հայրապետն իր բազմաչարչար կյանքի վերջին շրջանն անցկացնում է Վասպուրականում, ուր տեղափոխել էր կաթողիկոսարանը: Աղթամարում նրա գործերի մասին տեղեկություններ չկան, բայց հավանաբար որոշ մասնակցություն է ունեցել այդ ժամանակ ընթացքի մեջ գտնվող Աղթամարի կաթողիկոսական կենտրոնի կառուցման աշխատանքներին: Կաթողիկոսը եկեղեցու կառուցման մասին հիշատակություն չունի, որը նշանակում է, որ այդ ժամանակ՝ 924 թ., Աղթամարի շինարարությունը դեռևս չէր ավարտվել: Աղթամարի պալատի և եկեղեցու շինարարությունն ավարտվել է կաթողիկոսի մահից (925-926) հետո՝ ամենայն հավանականությամբ 928 թ.[14]: Ենթադրվում է, որ մինչև Աղթամարի հոգևոր կենտրոնի կառուցման ավարտը կաթողիկոսարանը գտնվել է Վասպուրականի թագավորանիստ Վանում:

[13] Եղիազարյան 2016, 82:
[14] Հարությունյան 2016, 185:

X դ. երրորդ տասնամյակից Վասպուրականի թագավորությունն ապրում էր խաղաղ զարգացման ժամանակաշրջան, որը, ինչպես Հայաստանի մյուս շրջաններում, տևում է շուրջ մեկ դար: Աղթամար կղզում շքեղակառույց մայրաքաղաքի հիմնումը նոր շուք է հաղորդում Գագիկի թագավորությանը: Աղթամարի մասին պատմելիս Անանունն այն անվանում է «հոյակապ եւ հռչակավոր եւ բարձրանշան» քաղաք[15]: Արքայական և իշխանական շքեղաշուք պալատների կողքին խոյանում է հրաշակառույց մի կոթող՝ Ս. Խաչ գմբեթավոր եկեղեցին, որն Անանունը բնորոշում է «գերապայծառ եւ պանծալի»[16]:

Հայոց կաթողիկոսի նստավայրը Աղթամար տեղափոխելով և հոգևոր վեհապետին հաստատելու իրավունք ձեռք բերելով՝ Գ. Արծրունին իրագործում է Վասպուրականը Հայաստանի կենտրոնական թագավորության վերածելու իր ծրագիրը: Այս փաստը խորհրդանշում էր Վասպուրականի թագավորության նվիրագործումը և ընդգծում Արծրունի գահակալի գերագահ դիրքը:

Աղթամարը հայոց կաթողիկոսանիստ դարձնելու Գագիկի նախաձեռնության հաջողության երաշխիքներից մեկը հայ իշխաններին այդ ժամանակ իրենց շուրջ համախմբելու Բագրատունի արքաների անկարողությունն էր: Աբաս Բագրատունին և Աշոտ Շապուհյանը չունեին բավարար կարողություն կենտրոնաձիգ, միասնական պետություն ստեղծելու համար: Կառուցելով նոր բերդեր՝ Աբաս Բագրատունին ամրացնում է իր իշխանության կենտրոն Վանանդ գավառի Կարս քաղաքը, պայծառացնում այն պալատով ու կաթողիկե եկեղեցով: Նրա օրոք Հայաստանի անդորրը խախտում են վրացիները, աբխազները և կովկասաբնակ զանազան ցեղեր: Վերջիններս, քաջալերված հայ իշխանների միասնության բացակայությունից, ասպատակում էին հայկական գավառները: Պատմիչը հիշատակում է աբխազաց Բեր թագավորին, որը «Բելապէս ամբարտաւանութեամբ» դեսպան է ուղարկում Աբասի մոտ, սպառնում, որ ինքը պետք է քաղկեդոնական ծեսով կատարի նորակառույց Ս. Առաքելոց եկեղեցու նավակատիքը[17]: Սակայն նրա ծրագիրը խափանվում է, քանզի ամբարտավան Բերին ձերբակալում և կուրացնում են:

Կարսի կաթողիկե եկեղեցին կառուցվել է 930-942 թթ., որից հետևում է, որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել արդեն կառուցված եկեղեցու օծման շրջանում, հավանաբար 943 թ.[18]: Աբասի թագավորության շրջանում աշխուժանում է եկեղեցական կյանքը, ընդարձակվում է կրոնական կազմակերպությունը, եկեղեցու ազգայնացման շուրջ վերստին կրոնական վեճեր են բորբոքվում[19]: Այդ ժամանակ տեղի էր ունենում Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթաց, որի միակ խոչընդոտը ենթադրաբար

[15] Թովմա Արծրունի և Անանուն 2010, 290:
[16] Թովմա Արծրունի և Անանուն 2010, 290:
[17] Ասողիկ 2010, 749:
[18] Եղիազարյան 2017, 62:
[19] Լեո 1967, 575-576:

մնացել էր հայոց թագավորությունը[20]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Աբասը նույնիսկ կաթողիկե եկեղեցի կառուցելուց հետո էլ հետամուտ չէր կաթողիկոսական աթոռը Վասպուրականից Արարատ տեղափոխելուն, որովհետև հասկանում էր, որ «Գագիկ դիւրաւ պիտի չհաւանէր ձեռքէ հանել կաթողիկոսին իր հովանաւորութեան ներքեւ մտած ըլլալուն առաւելութիւնը»[21]:

Աղթամարում աթոռակալած Հայոց կաթողիկոսները

Հայ մատենագրության հաղորդումներում խոսվում է Աղթամարում աթոռակալած երեք Հայոց կաթողիկոսի մասին, որոնց հաստատել է Գագիկ Արծրունին, որոնք և եղել են նրա հովանավորության ներքո: Ենթադրելի է, որ նրանք Վասպուրականի հոգևոր դասի ներկայացուցիչներ էին: Այս հանգամանքից ելնելով՝ Մ. Օրմանյանը նրանց կոչում է Ռշտունի՝ վերականգնելով հոգևոր առաջնորդների՝ միջնադարում ընդունված ավանդական անվանաձևը: Նա անկեղծորեն խոստովանում է, որ դրա համար ինքը որևէ աղբյուր չի ունեցել, բայց «քանի որ Աղթամար Ռշտունեաց գաւառին մէջն է», և նրանց տեղացի լինելն ակներև է, «Ռշտունի կոչեցինք» նրանց[22]:

Հովհաննես Դրասխանակերտցուց հետո «առնու զկաթողիկոսութիւնն տէր Ստեփանոս ամ մի»[23]: Վերջինիս գործունեության մասին տեղեկությունների իսպառ բացակայությունը թույլ է տվել Մ. Օրմանյանին ենթադրել, որ Ստեփանոսը Վասպուրականի «տարիքով յառաջացած եւ դիրքով նախապատուած» եպիսկոպոսներից մեկն էր[24]: Նրա մասին առաջին հիշատակությունը պատկանում է իրենից երկու դար հետո ապրած ժամանակագիր Սամվել Անեցուն[25]: Մինչդեռ ավանդական պատմագրության սկզբունքներին հետևող պատմիչ Ասողիկը, որն ավելի ժամանակամերձ է հիշյալ հոգևորականին, չի հիշում Ստեփանոս անունով կաթողիկոսի: Նա հաղորդում է, որ «զկնի մահուան տեառն Յովհաննիսի յերկրորդ շինութեանս Հայոց եկաց կաթողիկոս Տէր Թէոդորոս»[26]:

Այս խնդրի վրա մասամբ լույս է սփռում X դ. հռչակավոր հոգևոր-մշակութային գործիչ, կաթողիկոս Անանիա Մոկացու «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» բնագիրը, որը հավանաբար եղել է Ասողիկի աղբյուրներից մեկը: Խոսելով այսպես կոչված Աղվանից «ապստամբության» մասին՝ Մոկացին պատմում է, որ Գևորգ Գառնեցի կաթողիկոսի մահվանից հետո Հայոց

[20] Եղիազարյան 2017, 62:
[21] Օրմանեան 2001, 1256:
[22] Օրմանեան 2001, 1250:
[23] Վարդան վարդապետ 1862, 89, հմմտ. Կիրակոս Գանձակեցի 1961, 85:
[24] Օրմանեան 2001, 1249:
[25] Սամուէլ Անեցի 2014, 172:
[26] Ասողիկ 2010, 748: Ստեփանոսի անունը որպես կաթողիկոս հիշատակված չէ նաև XIII դ. սկզբի ժամանակագիր Հովհաննես Ավագերեցի գործում: Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. 1956, 24-25:

Արևելից կողմանց կաթողիկոսները Հայոց կաթողիկոսից ձեռնադրություն չէին ստանում, և այդ վիճակը «տևեալ ապստամբութեամբ զամս ԿԹ (69) և զժամանակս հայրապետաց հնգից, մինչև ի մեր նուաստութիւնս»[27]: Եկեղեցական պաշտոնական տեղեկագրի արժեք ունեցող այս փաստաթղթում կաթողիկոսը հականե-հանվանե չի հիշատակում 69-ամյա ժամանակահատվածում գահակալած հայոց հոգևոր առաջնորդներին: Սակայն կոնկրետ տարիների քանակի մատնանշումը թույլ է տալիս ասել, որ նա հաշվարկը սկսել է Գևորգ Գառնեցուց (877-897) և նկատի է ունեցել Մաշտոց Եղիվարդեցի (897-898), Հովհաննես Ե Դրասխանակերտցի (898-925), Թեոդորոս Ա Ռշտունի (926-937) և Եղիսե (937-942) կաթողիկոսներին: Այս ցանկում Ստեփանոսի բացակայությունը հիմնավորվում է Անանիա Մոկացու մեկ այլ ուշագրավ թղթով ևս, որտեղ նա հաղորդում է, որ ինքը, Սբ Լուսավորչից սկսած, հիսուներեքերորդ հայրապետն է. «Յիսնաքանակ երիւք (հիսուներեք - Վ.Ա.) հանդերձ աստուածաջոկ երամս»[28]: Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է, որ ինքը Սբ Լուսավորչի ժառանգներից հիսուներորդն է. «Եւ այսպէս, ինեւ հանդերձ լցել եղեւ թիւ յոբելենին յիսներեկի համարոյ, հայրապետութեանս Հայոց, որ սկիզբն առ յերջանիկ եւ սուրբ Լուսաւորչէն Գրիգորէ մինչեւ ցարդ եւս»[29]: Հետևաբար՝ Դրասխանակերտցու և Մոկացու միջև ընկած ժամանակաշրջանում հիսունմեկերորդ կաթողիկոսը տեր Թեոդորոսն է, հիսուներկուերորդը՝ տեր Եղիշեն:

Հայ եկեղեցու հինավուրց ավանդների պաշտպան և կաթողիկոսական իշխանության ամրապնդման նախանձախնդիր Անանիա Մոկացին Ստեփանոս Բ-ին չի ներառել «հայրապետաց հնգից» ցանկում թերևս այն պատճառով, որ նա աթոռակալել է առանց որևէ ներկայացուցչական ժողովի ընտրության[30]: Ստեփանոսը կաթողիկոս է դարձել Գագիկ Արծրունու արքայական հրամանի ուժով և աթոռակալել է տեղապահի կարգավիճակով 925-926 թթ.[31]: Այդ պատճառով Անանիա Մոկացին, ինչպես նաև նրան հետևող Ասողիկը Ստեփանոս Բ-ին չեն ներառել իրենց գավազանագրքերում:

Ստեփանոս Բ-ից հետո Գագիկ Արծրունին հայոց կաթողիկոսության գլուխ է կարգում տեղի եպիսկոպոսներից Թեոդորոսին, որը պաշտոնավարում է 11 տարի՝ 926-937 թթ.[32]: Նրա աթոռակալությունն անցել է Հայաստանում տիրող համեմատաբար հանդարտ կացության մեջ, որը պայմանավոր-

---

[27] Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի 1897, 139:

[28] Տեր-Մկրտչյան 1998, 133:

[29] Դրասխանակերտցի 2010, 609:

[30] Հայոց կաթողիկոսներին ընտրում էր ազգային-եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին Հայ եկեղեցու նվիրապետական կառույցների ներկայացուցիչները, ինչպես նաև իշխանները (Մելիք-Թանգեան 1905, 112-128):

[31] Սամուէլ Անեցի 2014, 172, հմմտ. Եղիազարյան 2020, 175:

[32] Ասողիկ 2010, 748, հմմտ. նաև Սամուէլ Անեցի 2014, 172, հմմտ. Կիրակոս Գանձակեցի 1961, 85, հմմտ. Վարդան վարդապետ 1862, 89, հմմտ. Եղիազարյան 2020, 175:

ված էր արտաքին հարձակումների դադարով: Այդ ժամանակահատվածը ոչ վաղ անցյալի համեմատությամբ ուներ մեծ առավելություններ: Էականորեն թուլացել էր քայքայվող խալիֆայական կենտրոնական իշխանության ճնշումը, և Հայաստանն այլևս ազատվել էր Աբբասյաններին հարկ վճարելուց: Վերացել էին նախկինում երկիրն ասպատակող արաբական տեղական իշխանությունների, մասնավորապես Ատրպատականի ամիրայության բռնությունները: Հետևաբար Հայաստանում տեղի էր ունենում հակառակ գործընթացը. զորեղանում և իրենց ինքնավարությունն էին ընդլայնում տեղական իշխանությունները: Իշխանական հակամարտությունները գրեթե դադարել էին, որովհետև բոլորն ընդունում էին Գագիկ Արծրունու գերագահությունը:

Բյուզանդիան Կոստանդին VII Ծիրանածին կայսեր (913-919, 945-959) աթոռակից Ռոմանոս Ա Լեկապենոսի (920-944) օրոք պատերազմում էր արաբական ամիրայությունների դեմ, որոնք գրավել էին Հայաստանի արևմտյան և հարավարևմտյան շրջանները: Բյուզանդացիները հետզհետե ընդարձակում էին արևելյան սահմանները Հայաստանի և Միջագետքի ուղղությամբ: Հայազգի նշանավոր զորավար Հովհաննես Կուրկուասը քսանամյա (920-942) համառ պատերազմներով վերագրավեց նախկին բյուզանդական Հայաստանի երկրամասերը մինչև վերին Եփրատ և վերին Տիգրիս գետերը: Միանգամայն բնական է, որ Բյուզանդիան հաղթական իր առաջխաղացման սկզբնական շրջանում սահմանակից հայկական և վրացական քրիստոնյա իշխանությունների հանդեպ վարում էր զգուշավոր ու խաղաղ քաղաքականություն և աշխատում էր ըստ կարելվույն օգտագործել նրանց զինվորական ուժերն ընդդեմ խալիֆայության և արաբական ամիրայությունների[33]:

Թեոդորոս Ա կաթողիկոսի հովվապետությունը նշանավորվել է ուշագրավ մի իրադարձությամբ, որի վերաբերյալ հայ պատմիչների երկերում, ցավոք, տեղեկություններ չեն պահպանվել: Խոսքը վերաբերում է «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ զետեղված Գագիկ Արծրունու նամակին՝ հասցեագրված Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Լեկապենոսին: Արծրունի բանիմաց իշխանազունը արծարծում է հայ-բյուզանդական դավանաբանական վիճահարույց խնդիրներ և կրոնական տարաձայնությունների փոխընդունելի լուծման ճանապարհով առաջարկում կայսրին Հայաստանը վերցնել Բյուզանդիայի հովանու ներքո: Թեև նամակում հիշատակության չկա դրա կազմելուն Թեոդորոս կաթողիկոսի մասնակցության մասին, սակայն ենթադրվում է, որ հայոց հոգևոր առաջնորդը տեղյակ է եղել նամակի բովանդակությանը: Բայց այս մասին մանրամասն կխոսենք ստորև:

Թեոդորոս Ռշտունու աթոռանիստը Աղթամարն էր, որտեղ էլ հավանաբար առաջացած տարիքում հրաժեշտ է տվել կյանքին և թաղվել Սուրբ Խաչ

[33] Մանանդյան 1952, 13-14:

կաթողիկեի մոտ: Այդ մասին հայտնում է Սամվել Անեցին. «Ի յԱղթամար տէր Թէոդորոս թաղած է յԱստուածածնի ժամատունն ի Սուրբ Խաչի շինեալն»[34]:

Թեոդորոս Ա-ին հաջորդում է եղբայրը, որին պատմիչները հորջորջել են Տէր Եղիսէ կամ Եղիշէ[35]: Նա կաթողիկոսական աթոռ է բարձրանում ժառանգության իրավունքով: Եղիշեի աթոռակալության տևողության վերաբերյալ նշվում է երկու ժամկետ՝ հինգ (Ե)[36] և յոթ (Է)[37]: Հաշվի առնելով, որ Ե և Է թվատառերը ձեռագրերում դյուրությամբ շփոթվել են, ընդունելի է նրա հնգամյա հովվապետության վարկածը[38]: Ելակետ ընդունելով Եղիշեին հաջորդած Անանիա Մոկացու աթոռակալության ժամանակագրությունը՝ կարելի է ենթադրել, որ նա աթոռակալել է 937-942 թթ.[39]:

Եղիշեի անունը Անանուն պատմիչը հիշատակում է հայերի համար ճակատագրական նշանակություն ունեցող մի իրադարձության առթիվ. 930-ականների վերջին Ատրպատականի ամիրաների դեմ պայքարում Բագրատունի և Արծրունի թագավորները հանդես էին գալիս ամուր դաշինքով: 938 թ. Ատրպատականի ամիրա, Գիլանի տեր Ալ-Լաշքարին[40] ներխուժում է Բագրատունյաց թագավորության տարածք և «գայ հասանէ մինչեւ զմեծ մայրաքաղաքն Դուին»: Աբաս Բագրատունին խնդրանքով դիմում է Գագիկ Արծրունուն: Վերջինս «յիշեալ զգութ արեան հարազատութեանն» զորքով մեկնում է Այրարատ՝ ոսոխից վրեժ լուծելու Արծրունյաց զորագնդերը մարտական կարգով դիրքավորվում են Խոր Վիրապ վանքի մատույցներում: «Սուրբ հայրապետն մեծն Եղիսէ» քահանայական դասի հետ «ելեալ ի կատարս բլերն Գինոյ, հանգոյն սրբոյն Ներսէսի անխոնարհելի ունելով զձեռս» աղոթք էր կարդում հայոց զենքի հաղթության համար՝ քաջալերելով թշնամու հանդիման կանգնած հայ ռազմիկներին[41]: Արծրունյաց զորքը փայլուն հաղթանակ է տանում և իր տիրապետության տակ վերցնում Դվինը:

Եղիշեի աթոռակալության շրջանում սաստկանում են Բյուզանդիայի Ռոմանոս Լեկապենոս կայսեր ձեռնարկած կրոնական ճնշումները: Մասնավորապես, նրա օրոք կայսրության սահմաններում ապրող հայերին պարտադրում են ընդունել հունական եկեղեցու դավանած քաղկեդոնական վարդա-

---

[34] Սամուէլ Անեցի 2014, 172:

[35] Սամուէլ Անեցի 2014, 173, հմմտ. Ասողիկ 2010, 749, հմմտ. Վարդան վարդապետ 1862, 89, հմմտ. Կիրակոս Գանձակեցի 1961, 85: Սամվել Անեցու ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության մեջ կաթողիկոսի անունը գրված է «Եղիա» ձևով (Սամուէլ Անեցի 1893, 99): Նույն կերպ է արձանագրված նաև Դավիթ Բաղիշեցու մոտ (Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. 1956, 337): Մ. Օրմանյանը գտնում է, որ անվան ձևը հետևանք է գրչագրական սխալի, և ինքը գերադասում է գործածել «Եղիշե» ձևը (Օրմանեան 2001, 1261, հմմտ. Չամչյան 1984, 827):

[36] Վարդան վարդապետ 1862, 89:

[37] Ասողիկ 2010, 749:

[38] Օրմանեան 2001, 1263:

[39] Օրմանյանը Եղիշեի աթոռակալությունը թվագրում է 941-946 թթ. (Օրմանեան 2001, 1263):

[40] Վարդանյան 1969, 107, հմմտ. Եղիազարյան 2017, 35:

[41] Թովմա Արծրունի և Անանուն 2010, 293:

պետությունը: Չհրաժարվելով ազգային եկեղեցու դավանանքից՝ «բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք ի Հոռոմոց յաշխարհէն սակս ուղղափառութեան, եկեալ յաշխարհս մեր», Շիրակի ու Սյունիքի և այլ գավառներում հիմնադրեցին վանքեր և շենացրին դրանք[42]:

Աթոռակալության վերջին շրջանում Եղիշեի նստավայրը եղել է Աղթամար կղզու դիմաց՝ Արտոս լեռան ստորոտում՝ Իլի բնակավայրում Գագիկ Արծրունու կառուցած «Քառասուն խորան Ս. Աստվածածին» եկեղեցին: Այդ մասին Սամվել ժամանակագիրը հաղորդում է. «Ի տէր Եղիսէէն էառ զԱղթամար Գագիկ եւ ետ նմա զԻլի, շինեաց եւ կատարեաց անդ զեկեղեցին, եւ է թաղած ի Բերդաձոր»[43]: Ենթադրվում է, որ այս եկեղեցին եղել է կաթողիկոսի նստավայրը: Գագիկը Աղթամարի եկեղեցին, որը մայրաքաղաքի գլխավոր եկեղեցին էր, վերցրել է Եղիշե կաթողիկոսից և նրան նոր նստավայր տվել կղզուց ոչ հեռու գտնվող Իլիում, որտեղ հիմնել է գեղաշեն եկեղեցի և կառուցել կացարաններ միաբանության անդամների համար: Ուշագրավ է նաև այս կաթողիկոսի Բերդաձորի վանքում (Ս. Աստվածածին, գտնվել է Առտեր կղզու դիմացի ծովեզերքից 2-3 կմ խորքում) թաղված լինելու մասին նշումը[44]:

Աղթամարում գահակալած հայրապետների՝ Հույն եկեղեցու դավանանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին վկայություններ չկան: Սակայն ենթադրելի է, որ այդ հարցում նրանք բացահայտ չեն ընդդիմացել Արծրունյաց արքունիքի «մեղմ» վերաբերմունքին հույների վարդապետության նկատմամբ, որն առնվազն խոսում է նրանց հակաքաղկեդոնական չլինելու մասին[45]:

Գագիկ Արծրունու «Թուղթը» Բյուզանդիայի կայսրին

Յուսուֆի մահից հետո Ատրպատականի ամիրապետ է նշանակվում Մուֆլիհը (929-937), որի իշխանության սկզբում արևելքում ակտիվանում է բյուզանդական բանակների առաջխաղացումը: Հայազգի տաղանդավոր զորավար Հովհաննես Կուրկուասի գլխավորությամբ նրանք 931 թ. հասնում են Արծրունյաց թագավորության մատույցները՝ նվաճելով Հայաստանի հարավում եղած մահմեդական ամիրայությունները: Կուրկուասը, կամենալով տիրանալ Վասպուրականին, հորդորում է Գագիկ Արծրունուն դիմել Բյուզանդիայի կայսրին և անցնել նրա հովանավորության տակ[46]:

---

[42] Վարդան վարդապետ 1862, 88, հմմտ. Չամչյան 1984, 823:

[43] Սամուէլ Անեցի 2014, 173:

[44] Սամուէլ Անեցի 2014, 379-380, ծանոթ. 181: Պատմաբան Կ. Մաթևոսյանը ենթադրում է, որ Կաթողիկոսարանի տեղափոխությունը Իլի կարող է թելադրված լինել Գագիկ Արծրունու բյուզանդամետ կողմնորոշմամբ, այն է՝ նրան այդ ժամանակ այլևս ձեռնտու չէր Հայոց կաթողիկոսի անմիջական ներկայությունն իր կողքին (Մաթևոսյան 2013, 32-33):

[45] Կոգեան 1961, 303, հմմտ. Հացունի 1927, 481:

[46] Հայ ժողովրդի պատմություն 1976, 66:

Վասպուրականը Բյուզանդիայի նվաճման սպառնալիքից ապահովագրելու նպատակով[47] Գագիկ Արծրունին «խորհեցաւ հաստատութեամբ ուխտ միաբանութեան դնել նաև ընդ կայսեր յունաց» և ընդունել նրա հովանավորությունը: Նա իր մտորումների շարադրանքը նամակով ուղարկում է բյուզանդական արքունիք՝ հայտնելով «զփափաք սրտի իւրոյ առ ի միաբանելոյ ընդ յոյնս՝ և հաստատելոյ զսէր հոգևոր և մարմնաւոր ընտանութենէ. և խնդրէր ի նոցանէ բառնալ ի միջոյ զխտրոց բաժանմանն»[48]: Բյուզանդիայի աշխարհիկ և հոգևոր առաջնորդներին հասցեագրված երկարաբան «թուղթը», որը եկեղեցական դիվանագիտության զինանոցի ամենաշատ կիրառվող գործիքներից էր, ուներ քաղաքական ենթատեքստ: Արծրունին ձգտում էր Հայ և Հույն եկեղեցիների միջև առկա բաժանարար գծերը վերացնելու ճանապարհով դաշնակցել Բյուզանդիայի հետ և ստանալ նրա հովանավորությունը:

Նամակը կրում է «Թուղթ Գագկայ Վասպուրականի Հայոց թագաւորի, առ կայսրն յունաց Ռոմանոս վասն հաւատոյ» վերնագիրը, մինչդեռ առաջաբանում այն հասցեագրված է «Գլուխ եպիսկոպոսաց Նոր Հռոմայ, պատրիարգի յընդանուրս»: Բովանդակության մեջ չեն հիշատակվում կայսեր և նամակի հոգևոր հասցեատիրոջ անունները, որը բացատրվում է այդ ժամանակ Բյուզանդիայում տիրող եկեղեցաքաղաքական իրողություններով: 920-944 թթ. Բյուզանդիայում փաստացի իշխանությունը օրինական կայսր Կոստանդին VII Ծիրանածնի գահակից Ռոմանոս Լեկապենոսի ձեռքում էր, որը, դրսևորելով «կեսարապապականություն»[49], կոպտորեն միջամտում էր եկեղեցու գործերին, ոտնահարում կրոնական սովորույթներն ու կանոնները[50]: Տիրանալով ամբողջական իշխանությանը՝ վերջինս մտադիր էր հիմնադրել սեփական հարստությունը, որի տիրապետությունը կտարածվեր նաև հոգևոր ոլորտի վրա: Ավագ որդիներին դարձնելով կայսերակից՝ նա գահազրկում է Տրյուփոն պատրիարքին (928-931) և պատրիարքությունը հանձնում կրտսեր որդուն՝ Թեոփիլակտոսին: Բայց վերջինիս անչափահասության պատճառով 931-933 թթ. 17 ամիս պատրիարքական աթոռը մնում է թափուր՝ դառնալով ներքաղաքական մեքենայությունների առարկա[51]: Հոգևորականությունը պառակտված էր տարբեր թևերի միջև: Ենթադրում ենք, որ նամակը գրվել է

[47] Վարդանյան 1980, 220:

[48] Չամչյան 1984, 819:

[49] Արևմտաեվրոպական պատմագրությունն այս եզրույթը շրջանառության մեջ է դրել XIX դ.: Այն բնութագրում է կայսերական իշխանության և եկեղեցու հարաբերությունները Բյուզանդիայում, երբ կայսրը նաև եկեղեցու գլուխն էր:

[50] Шангин 1947, 236.

[51] Шангин 1947, 237: Ֆրանսիացի պատմաբան Թուրնեբիզը կարծում է, որ Գագիկ Արծրունին նամակը ուղարկել է Բյուզանդիայի այդ ժամանակվա պատրիարք Տրյուփոնին (Tournebize 1910, 145):

հենց այդ ժամանակահատվածում՝ 931-933 թթ.[52], և այդ անորոշության պատճառով պատկան հասցեատիրոջ անունը չի նշվել:

Հարգալից ոճով և պատշաճ մեծարանքով դիմելով Կ.Պոլսի «սուրբ և բարձրագահ արքեպիսկոպոսիդ, և առաքելաժառանգ պատրիարգիդ» և «սուրբ թագավորիդ քրիստոսեան աթոռաժառանգ աւանդապահի»՝ հեղինակը վկայակոչում է «գիրք պատմագրացն», որոնք հավաստում են, որ Հայաստանը «բնաբար» եղել է կայսերական իշխանության և հայրապետական հովանավորության ներքո[53]: Լավատեսությամբ և բարի կամեցողությամբ Արծրունի արքան հայտարարում է, որ «ոչ միայն սիրողաբար հարկս հարկանէաք կայսէր, այլ և առ Սուրբ հաւատոյն միաւորություն խոստովանութեան հաղորդս և հաւասարս գտանէաք»[54]: Գագիկ արքան, անշուշտ, ծանոթ էր եկեղեցական դիվանագիտության պատմությանը և լավատեղյակ էր հայ-բյուզանդական եկեղեցական միության շուրջ նախորդ թղթակցությունների բովանդակությանը: Այդ պատճառով դիմելով «առ սուրբ և քրիստոսապսակեալ թագաւորդ» Ռոմանոսին և «սուրբ և բարձրագահ արքեպիսկոպոսիդ, և առաքելաժառանգ պատրիարգիդ»՝ հայտնում է, որ մեծ վնաս կլինի հայերի համար «մերժել հեռանալ ի սուրբ հայրապետական խնամարկութենէ և յարդիւնաւոր աւրհնութեանց և սրբամատոյց աղաւթից»: Հետագա տողերից պարզ է դառնում, որ հայ-բյուզանդական եկեղեցական միության վերոհիշյալ խոսքերը վերաբերելի էին Քաղկեդոնի ժողովին նախորդած ժամանակաշրջանին: Հայերը հավատարիմ են առաջին երեք տիեզերական ժողովների որոշումներին և բարձր մակարդակով մասնակցել են Նիկիայի ու Կ. Պոլսի ժողովներին: Երրորդ՝ Եփեսոսի ժողովին, ճիշտ է, «ոչ ոք էր ի մերմէ» ներկա, սակայն Ընդհանրական եկեղեցու հայրերի «թղթերը» «հասին առ մեծն Սահակ և երանելին Մաշդոց, և միաձայնութեամբ ի մի ուղղափառ խոստովանութիւն վերագրեցան»[55]: Միանգամայն այլ է թագակիր հեղինակի վերաբերմունքը չորրորդ՝ Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ: Նա խոստովանում է, որ հայ վարդապետները միակարծիք չեն այս ժողովի հարցում. «...ոչ զմիաձայնութիւն յանձին ունին վարդապետքս Հայոց հաղորդել ընդ ժողովոյն ՈԼՋ (636) եպիսկոպոսացն»: Արծրունին, հիմնվելով հայոց վարդապետների հաղորդած տեղեկությունների վրա, 451 թ. Քաղկեդոնի եկեղեցական ժողովի ընդունած

[52] Մ. Չամչյանը նշում է, որ նամակագրությունը տեղի է ունեցել 926 թ. (Չամչյան 1984, 819-821, հմմտ. Runciman 1969, 138, ծանոթ. 1): Մ. Օրմանյանը կարծում է, որ նամակը գրվել է 930 թ. ոչ շուտ (Օրմանեան 2001, 1258-1259): Վ. Վարդանյանը գտնում է, որ նամակը գրվել է 931 թ. (Վարդանյան 1969, 104): Գ. Մաքսուդյանը ենթադրում է, որ նամակը գրվել է Հովհաննես Դրասխանակերտցու մահից անմիջապես հետո՝ 925 թ.: Հավանաբար Գագիկ Արծրունին է ցանկություն հայտնել, որ Հայոց կաթողիկոսը ձեռնադրվի Կ. Պոլսում, ինչպես նշված է Նիկողայոս Միստիկոսի նամակում (Yovhannes Drasxanakertci 1987, 23, հմմտ. Բարթիկյան 1966, 252):

[53] Գիրք թղթոց 1901, 295:

[54] Գիրք թղթոց 1901, 295:

[55] Գիրք թղթոց 1901, 296:

կանոնները մեկնաբանում է որպես նեստորական ուսմունք. «Նեստորաբար իմացմամբ սահմանեցին յետ անճառ միաւորութեան Բանին և մարմնոյն՝ երկու բնութիւնս բաժանաբար ի մի Տէր Յիսուս Քրիստոս խոստովանեցին, և երկուս կամս և երկուս ներգործութիւնս և զխաչն և զմահն մարդոյն միայնոյ սահմանեցին, և ոչ Աստուծոյ մարդեղելոյ ի սուրբ կուսէն Աստուածածնէն»: Շեշտում է, որ այդ գաղափարները Սբ Գրիգոր Լուսավորիչը և եկեղեցու հայրերը չեն ավանդել:

Հետագա շարադրանքում «թղթի» հեղինակը երկարաշունչ բացատրություն է տալիս Քրիստոսի բնության վերաբերյալ Հայ եկեղեցու տեսակետին: Եկեղեցու հայրերի աշխատություններից քաղվածքներ բերելով՝ նշում է հայոց վարդապետության աղբյուրները: Իր թեզը հիմնավորելու համար Գագիկը վկայակոչում է Մելիտոս Անտիոքացու «Մի բնութիւն խոստովանիմք և երկու գոյացութիւնք» բանաձևը: Մի բնություն բանաձևով Հայ եկեղեցին ակնարկում է ոչ թե Քրիստոսի միակ բնությունը, այլ աստվածային և մարդկային բնությունների հրաշալի միասնությունը[56]: Այդ տարակարծությունները դեռևս VIII դարում հարթել է Հայոց կաթողիկոս և փիլիսոփա Հովհաննես Օձնեցին (717-728)՝ առաջ քաշելով հետևյալ բանաձևը. «Է ըստ բնութեան երկուց՝ աստուածային և մարդկային, իսկ ըստ միաւորութեան՝ մի»: Նա վկայակոչում է նաև Բարսեղ Կեսարացուն և ընդգծում. «երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն»[57]:

Քաղկեդոնի եկեղեցական ժողովի կանոնների շուրջ ծավալված պայքարի համառոտ նկարագրմամբ Արծրունի իշխանազունը փաստում է, որ, հայերից բացի, Քաղկեդոնի կանոններին «ընդդէմ կացին ժողովոյն» նաև Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Կ. Պոլսի և Հռոմի մի շարք աստվածաբաններ, նույնիսկ Բյուզանդիայի կայսրերից ոմանք: Գագիկը պատեհ է համարում հիշեցնել Հայ եկեղեցու դավանական դիրքորոշման հստակեցման օրակարգով կաթողիկոս Բաբկեն Ոթմսեցու (490-516)՝ Դվինում գումարած ժողովը (506 թ.), որին ներկա էր նաև Վրաց Գաբրիել կաթողիկոսը: Այստեղ «Հայք և Վիրք և Աղուանք» միասնական դիրքորոշմամբ մերժել են Քաղկեդոնի եկեղեցական ժողովի կանոնները և «միաձայն խոստովանութեամբ... և ընդդէմ ժողովոյն միախորհ եդին ընդդիմակս»[58]:

Քրիստոսի բնության հարցից բացի, դավանաբանական կարևոր տարբերություններից էր Երրորդության փառաբանությանը նվիրված «Սուրբ Աստուած» երգի «որ խաչեցար վասն մեր» հավելվածը: Գագիկ Արծրունին, իր տեղեկությունները քաղելով հեղինակավոր աստվածաբան-վարդապետներից, ընդարձակ մեկնաբանություն է տալիս և բացատրում. «Քաւ մի լիցի. ոչ

[56] Գրիգորյան 1989, 96:
[57] Հովհաննես Օձնեցի 1953, 68:
[58] Գիրք թղթոց 1901, 300:

Երրորդութեանն զփառաբանութիւնս զայս վերաձայնեմք, այլ Որդւոյ միայնոյ. Որպէս զմարդանալն ի կուսէն Որդւոյ միայնոյ հաւատամք. այսպէս զխաչն և զմահն Որդւոյ խոստովանիմք»[59]: Նա կամենում է կողմերն իրար մերձեցնել և փոխադարձ զիջումներով՝ երկուսից «նոր մարդ» պատրաստել: Նամակը եզրափակվում է տարբերությունները կամ միջնորմը վերացնելու և երկու կողմերը հաշտության նոր բանաձևով միավորելու կոչով. «...եթե իցէ արդեօք հնարաւոր ի բաց բառնալ զկրճիմն՝ որ կայ ի միջի ըստ առաքելոյն Պաւղոսի զցանկն քակել, և զմիջնորմն յատակել, և զերկոսինն հաստատել ի մի նոր մարդ, յոր կոչեցաք ծննդեամբ սուրբ աւազանին»[60]: Վասպուրականի թագավորի ձգտումը բյուզանդացիներին ինքնանպատակ հակադրվելն ու զայրացնելը չէր, այլ ընդհակառակը՝ հաշտության և համերաշխության եզրեր գտնելը: Մանավանդ որ հակաքաղկեդոնականությունը նույնությամբ չէր արտացոլում հայերի քաղաքական դիրքորոշումը կայսրության նկատմամբ[61]:

Երկխոսության միտված Արծրունի արքայի նամակը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»: Սակայն, ինչպես նկատում է բրիտանացի բյուզանդագետ Ռանսիմենը, Արծրունի թագավորն իր աստվածաբանական թղթով, անկասկած, շահեց Ռոմանոս կայսեր համակրությունը և, ի նպաստ Վասպուրականի, ապահովեց նրա աջակցությունը[62]: Բյուզանդական արքունիքը խնդրո առարկա գրությունը թողեց անպատասխան, քանզի հասկանում էր, որ Գագիկ Արծրունին, լինելով երկրի աշխարհիկ առաջնորդը, նամակում արծարծում է ազգային ինքնության համար մեծ կարևորություն ունեցող, դարերով սրբագործված դավանաբանական դրույթներ, որոնք նա ի զորու չէ փոփոխելու: Հույները դարերի փորձով գիտեին, որ հայերը դյուրությամբ չեն զիջի իրենց եկեղեցու «ինքնիշխանության» հիմքը կազմող ազգային դավանանքը: Հայ և Հույն եկեղեցիները ժամանակի ընթացքում այնպիսի դավանաբանական կարծրատիպեր էին ձևավորել, որ դրանք վերացնելը շղթայական փոփոխությունների պահանջ էր դնելու նաև նվիրապետական համակարգում: Իսկ այստեղ գործում էր նյութական և տնտեսական կայուն շահերի վրա կառուցված համակարգ, որի շահառուն նման փոփոխություններին ընդդիմադիր պահպանողական հոգևորական դասն էր:

Ուշագրավ է, որ դիվանագիտական իր ուղերձում թագակիր Արծրունին խոսում է ոչ թե Վասպուրականի թագավորության և նրա գահակալի, այլ ողջ հայության անունից[63]: Իսկ այդ ժամանակ Հայաստանում կար երեք թագավոր՝ Գագիկ Արծրունի, Աբաս Բագրատունի և Աշոտ Շապուհյան (մահացել է 934 թ.): Ձևավորված «եռաթագավորության» պայմաններում ամբողջ հա-

[59] Գիրք թղթոց 1901, 298:
[60] Գիրք թղթոց 1901, 301, հմմտ. Չամչյան 1984, 821:
[61] Юзбашян 1988, 116.
[62] Runciman 1963, 138.
[63] Yeghiazaryan 2016, 83.

յության անունից խոսող Գագիկ Արծրունու «թուղթը» վստահություն և արժանահավատություն չէր ներշնչում: Կայսրը չի վստահում դավանական հակամարտությունները վերացնելու Գագիկ Արծրունու կարողությանը և չի պատասխանում նրա նամակին[64]՝ գերադասելով Realpolitik-ը:

Դժբախտաբար, Գագիկ Արծրունու նամակի համար փաստաթղթեր և այլ նյութեր հայթայթող վարդապետների մասին տեղեկություններ չկան, սակայն կարելի է ենթադրել, որ այդ գործին լծված են եղել կաթողիկոսարանի ներհուն գիտնական վարդապետներ, որոնց գլուխ կանգնած էր ժամանակի կաթողիկոս Թեոդորոս Ռշտունին[65]: Չի բացառվում, որ նամակի պատրաստմանը աջակցել և քաջալերել են ժամանակի նշանավոր մտավորականներ, ապագա կաթողիկոս Անանիա Մոկացին, Անանիա Նարեկացին:

Եզրակացություններ

Աշոտ Երկաթի մահից հետո Հայաստանում և քրիստոնյա Այսրկովկասում բարձր հեղինակություն էր վայելում Գագիկ Արծրունին, որի գերագահությունը ճանաչում էին հարևան հզոր պետությունները՝ Բյուզանդիան և Արաբական խալիֆայությունը: Նրա դիրքը հայոց իշխանական աստիճանակարգության մեջ բնութագրվում է որպես Primus inter pares:

Արաբների կողմից Դվինի կաթողիկոսարանի հիմնահատակ ավերումից և հայրապետական տիրույթների բռնազավթումից հետո Հովհաննես Դրասխանակերտցին կյանքի վերջին շրջանն անցկացնում է Վասպուրականում՝ փաստացի ձևակերպելով Հայոց նվիրապետական կենտրոնի տեղափոխությունը Դվինից Աղթամար: Գագիկ Արծրունու ջանքերով Աղթամարը կաթողիկոսական նստավայրի վերածելն ուներ Վասպուրականի թագավորության նվիրագործման խորհրդանշական իմաստ: Սրանով նախադրյալներ էին ստեղծվում Վասպուրականը Հայաստանի կենտրոնական թագավորություն հռչակելու՝ թագակիր Արծրունու վաղեմի ծրագրերի իրականացման համար:

Հայոց նվիրապետության կենտրոնը տեղափոխելով Աղթամար և մոտ երկու տասնամյակ (925-943) տնօրինելով նրա առաջնորդների ընտրությունը՝ Գագիկ Արծրունին շարունակաբար մեծացնում էր իր իշխանությունը համազգային հոգևոր կառույցի վրա: Այդ ընթացքում Աղթամարում հաջորդաբար պաշտոնավարել են Ստեփանոս Բ, Թեոդորոս Ա և Եղիշե Ա Ռշտունի կաթողիկոսները, որոնք տեղի հոգևորականության ներկայացուցիչներ էին: Վերջիններս Հայոց կաթողիկոս էին դարձել Արծրունի արքայի կամքով ու ցանկությամբ, ուստի և նրա «բարձր հովանու» ներքո էին: Հայ պատմագիրները սակավախոս են հիշյալ կաթողիկոսների մասին, իսկ նրանց եկեղեցական, կրթական-մշակութային գործունեության մասին տեղեկությունները գրեթե

[64] Վարդանյան 2002, 126:
[65] Կոգեան 1961, 303:

բացակայում են: Դրա փոխարեն հայ մատենագրության հաղորդումներում արժևորված է Արծրունի արքայի դերը երկրի քաղաքական, եկեղեցական և քաղաքաշինական ասպարեզներում:

Փաստացի ունենալով գերակա դիրք և բարձր տիտղոսային իշխանություն՝ Գ. Արծրունին պարտավորված է զգում ձեռնարկել երկրի և ժողովրդի անվտանգության գերխնդրից բխող գործնական քայլեր, չեզոքացնել արտաքին սպառնալիքները: Այդ նպատակով նա հայության անունից նամակ է հղում Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Լեկապենոսին ու առաջարկում Հայ և Հույն եկեղեցիների դավանաբանական տարաձայնությունները վերացնելու ճանապարհով հասնել քաղաքական դաշնակցության: Գագիկը պատրաստակամություն է հայտնում ընդունել կայսրության հովանավորությունը, որը կապահովագրեր հայերին արտաքին սպառնալիքներից: Բյուզանդական արքունիքը նամակը թողնում է անպատասխան՝ անուղղակիորեն արտահայտելով իր թերահավատությունը Գագիկ Արծրունու առաջարկների վերաբերյալ:

Օգտագործված գրականություն

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 648 էջ:

Ալիշան Ղ. 1873, Ներսես Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 538 էջ:

Ակինյան Ն. 1920, Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, Մխիթարեան տպ., 200 էջ:

Անանեան Պ. 1989, Փոտ պատրիարքի թղթակցութիւնը հայոց հետ, «Բազմավեպ», N 1-4, էջ 37-66:

Բարթիկյան Հ. 1966, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, ՊԲՀ, N 4, էջ 251-256:

Գիրք թղթոց 1901, Թիֆլիս, տպարան Տ. Ռոտինեանց եւ Մ. Շարաձե, 584 էջ:

Գրիգորյան Մ. 1989, Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին, ՊԲՀ, N 3, էջ 94-101:

Եղիազարյան Ա. 2017, Աբաս Բագրատունի, Երևան, ԵՊՀ հրատ., 121 էջ:

Եղիազարյան Ա. 2016, Աշոտ Երկաթ. թագավոր հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 117 էջ:

Եղիազարյան Ա. 2020, IX դարի վերջի և X դարի առաջին կեսի Ամենայն հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրության շուրջ, Աստվածաբանական և կրոնական հոդվածների ժողովածու, Գ, էջ 161-178:

Թովմա Արծրունի եւ Անանուն 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց, Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Պատմագրութիւն, Գիրք Ա, ԵՊՀ հրատ., Լիբանան-Անթիլիաս, 795 էջ:

Լեո 1967, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, «Հայաստան», 786 էջ:

Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն հայոց, աշխատասիր. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 426 էջ:

Կոգեան Ս. 1961, Հայոց եկեղեցին, մինչեւ փլորենտեան ժողովը, տպ. Վարդան Թեքէեան Բէյրութ, 776 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1976, հ. Գ, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1023 էջ:

Հարությունյան Բ. 2016, Արծրունյաց իշխանական ընտանիքը Հայոց պատմության մեջ, Երևան, «Մեկնարկ», 304 էջ:
Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի 1862, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 184 էջ:
Հացունի Վ. 1927, Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 588 էջ:
Հովհաննես Օձնեցի 1953, Ընդդէմ երեւութականաց, Մատենագրութիւնք, II տպ., Վենետիկ, Ս. Ղազարի տպ., էջ 61-97:
Ղաֆադարյան Կ. 1952, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 159 էջ:
Մաթևոսյան Կ. 2013, Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը, Սբ. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 177 էջ:
Մանանդյան Հ. 1952, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության (XI-XV դարեր), հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 455 էջ:
Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. 1956, կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 684 էջ:
Մելիք-Թանգեան Ն. 1905, Հայոց եկեղեցական իրավունք, Բ, Շուշի, Արագատիպ Բ. Տէր-Սահակեանցի, 279 էջ:
Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ 2010, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 795 էջ:
Չամչյան Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 1060 էջ:
Սամուէլ Անեցի եւ շարունակողներ 2014, աշխատասիր. Կ. Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի», 502 էջ:
Սամուէլի քահանայի Անեցւոյ 1893, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպ., 331 էջ:
Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ 2010, Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 893 էջ:
Վարդանյան Վ. 2002, Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, «Գիտություն», 220 էջ:
Վարդանյան Վ. 1988, Հովհաննես Դրասխանակերտցու կյանքի վերջին շրջանի մասին, ՊԲՀ, N 3, էջ 114-125:
Վարդանյան Վ. 1969, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը. 908-1021 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 290 էջ:
Վարդանյան Վ. 1980, Վասպուրականի 910-930-ական թթ. պատմության շուրջ, ՊԲՀ, N 1, էջ 215-222:
Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից 1897, Արարատ, N 3, էջ 129-144:
Տեր-Ղևոնդյան Ա. 1965, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 312 էջ:
Տեր-Մկրտչյան Գ. 1998, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիրությամբ Պ. Հակոբյանի, Երևան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպ., 816 էջ:
Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1981, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 442 էջ:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1970, 6, Բյուզանդական աղբյուրներ Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հր. Բարթիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 367 էջ:
Օրմանյան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1870 էջ:
Шангин М. 1947, Письма Арефы - новый источник о политических событиях в Византии 931-934 гг., Византийский временник, т. I (XXVI), с. 235-260.
Юзбашян К. 1988, Армянские государства в эпоху Багратидов и Византия IX-XI вв., Москва, «Наука», 300 с.
Runciman S. 1963, The emperor Romanus Lecapenus and his Reign, Cambridge, England, Published by the Syndics of the Cambridge University Press, 275 p.
Tournebize F. 1910, Historie Politique et Religieuse de L'Armenie, t. 1, Paris, Typographie Firmin-Didot et Cie, 872 p.
Yeghiazaryan A. 2016, Gagik Artsruni-«King of Armenia and Georgia», Բանբեր հայագիտության, Հայագիտական միջազգային հանդես, N 1, էջ 77-94:
Yovhannes Drasxanakertci 1987, History of Armenia, Translation and Commentary by Rev. Krikor H. Maksoudian, Atlanta, Georgia, Scholars press, 372 p.

АРМЯНСКИЙ КАТОЛИКОССКИЙ ПРЕСТОЛ В АХТАМАРЕ (II ЧЕТВЕРТЬ X ВЕКА)

Вардан Алексанян

Резюме

Когда Армянский католикосат в Двине был захвачен арабами, Ованнес Драсханакертци обосновался в Васпуракане, тем самым переместив католикосский престол из Двина в Ахтамар, чему во многом способствовал царь Васпуракана Гагик Арцруни, как Primus inter pares.

Более двух десятилетий (925-943) Гагик Арцруни принимал активное участие в избрании католикосов, таким образом наращивая свое влияние на институт церковной власти. Католикосы Степанос II, Теодорос I и Егише I Рштуни были избраны из местного духовенства по воле и желанию Гагика Арцруни и пользовались его покровительством. Фактически, обладая титульной властью, Гагик Арцруни должен был предотвратить внешние угрозы и обеспечить безопасность страны и народа. С этой целью он от имени армянского народа обратился с письмом к византийскому императору Романосу Лекапеносу с предложением об устранении разногласий между армянской и византийской церковью. При этом Гагик Арцруни готов был признать политическую доминанту Византии и принять ее покровительство, дабы обеспечить безопасность страны. Однако византийский двор не откликнулся на это письмо армянского царя, тем самым косвенно продемонстрировав скептическое отношение к предложению Гагика Арцруни.

Ключевые слова – Гагик Арцруни, Ахтамар, резиденция католикоса, Двин, письмо, Византия, Васпуракан.

THE THRONE OF ARMENIAN CATHOLICOSES IN AGHTAMAR (THE SECOND QUARTER OF THE 10TH CENTURY)

Vardan Alexanyan

Abstract

After the thorough destruction of Dvin by the Arabs and the seizure of the patriarchal possessions, Hovhannes Draskhanakaertsi spent the last period of his life in Vaspurakan. By this he formulated the transfer of the center of the Armenian church hierarchy from Dvin to Aghtamar. The king of Vaspurakan Gagik Artsruni played a big role in this, whose position in the Armenian princely hierarchy is characterized as Primus inter pares.

By moving the center of the Armenian Church to Aghtamar, Gagik Artsruni for about two decades (925-943) ruled the leaders of the Catholicos throne and consistently increased his influence over the nationwide confessional organization. During the time under study, Aghtamar was ruled by Catholicos Stepanos II, Theodoros I and Yeghishe I Rshtuni, who belonged to the local clergy. They became Catholicos by the will and desire of Gagik Artsruni and were under his high patronage. Possessing an actual high position and titular power, the Artsrunid king was obliged to initiate practical steps to prevent external threats and ensure the security of the country and people. Gagik Artsruni represented the ways of resolving these issues in alliance with Byzantium and accepting its patronage. To this end, he wrote a letter to the Byzantine king Romanus Lekapenus. In the letter, he proposed to achieve political union by eliminating theological differences between the Armenian and Byzantine churches. Gagik expressed readiness to recognize the political supremacy of Byzantium and accept its patronage. By this he intended to insure the Armenians from external threats. The Byzantine court left the letter unanswered, indirectly expressing skepticism about his proposals.

Key words – Gagik Artsruni, Aghtamar, Residence of the Catholicos, Dvin, Letter, Byzantium, Vaspurakan.